ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Լոռու մարզային բաժին

ք. Վանաձոր,2001, Գ. Նժդեհի 16, հեռ.060713535

Ելք N 0024531743, 29 հոկտեմբերի 2025 թ.

Վանաձորի համայնքի աշխատակազմ
Լոռվա մարզ, ք. Վանաձոր, Հայքի հրապարակ

Լուսավոր հարաստան ԿՍ
ք.Երևան, Կենտրոն, Բաղրամյան 1/24

ՈՐՈՇՈՒՄ

Գույքի նկատմամբ հայտարարված հետախուզումը դադարեցնելու, արգելանքները վերացնելու և կատարողական վարույթը կարճելու մասին

29 հոկտեմբերի 2025 թ. **ք. Վանաձոր**

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Լոռու մարզային բաժին, հարկադիր կատարող արդարադատության ավ. լեյտենանտ Դավիթ Պապոյանս ուսումնասիրելով թիվ **08473977** կատարողական վարույթի նյութերը

ՊԱՐԶԵՑԻ

ՀՀ Վարչական դատարանի կողմից **24 դեկտեմբերի 2021 թ.** տրված թիվ **ՎԴ/13416/05/21** կատարողական թերթի համաձայն պետք է՝

Պատասխանողներին արգելել համայնքի ղեկավար ընտրելու հարցի քննարկման նպատակով ավագանու նիստերի կազմակերպմանն ու անցկացմանն ուղղված որևէ գործողության կատարումը՝ մինչև թիվ ՎԴ/13178/05/21 վարչական գործով ՀՀ վերաքննիչ վարչական դատարան ներկայացված վերաքննիչ բողոքի ընդունելության հարցի լուծում: ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից 06.09.2023թ. տրված թիվ ՎԴ/13178/05/21 որոշման համաձայն վճռաբեկ բողոքը մերժվել է: ՀՀ Վերաքննիչ վարչական դատարանի 07.01.2022թ. «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:
ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 28.1, 44.1 հոդվածներով և 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով.

ՈՐՈՇԵՑԻ

1. Կարճել թիվ **08473977** կատարողական վարույթը:

Որոշման պատճենն ուղարկել կողմերին:
Հարկադիր կատարողի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.
Կատարողական վարույթի վերաբերյալ տեղեկություն կարող եք ստանալ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության www.cesa.am պաշտոնական կայքի «Անձնական գրասենյակ» էլեկտրոնային հարթակի միջոցով:

հարկադիր կատարող՝ Դ. Պապոյան

ստորագրություն՝